ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 230-Ա

« 07 » ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022Թ.

ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1468-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1468-Ն որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ գումարից 17 977 000 (տասնյոթ միլիոն ինը հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամը որպես փոխհատուցում, շահառու ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված համաձայնագրերի հիման վրա, հատկացնել 2022 թվականի սեպտեմբերի 13-ի հրետակոծության հետևանքով մարզի Ջերմուկ համայնքի տուժածներին՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ ապահովել որոշման պահանջների կատարումը:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի գլխավոր քարտուղարին:

12/7/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր